ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №ԳՀԱՊՁԲ-26-9/7-4

ք. Երևան 23 .04.2026թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, որը գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ. Թադևոսյանի, որը գործում է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի №1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **20 օրից ավելի:**

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **20 օրից ավելի,**

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***30,684,880 (երեսուն միլիոն վեց հարյուր ութսունչորս հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, բացառությամբ 40-րդ չափաբաժնի, որի գինը կազմում է 260,000 (երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված №2) նախատեսված եռամսյակներին, **բայց ոչ ուշ, քան 25-ը դեկտեմբերի 2026թ.:**

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված №3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված №3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու **կամ չմատակարարելու** դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.8 Պայմանագրով նախատեսված տույժերի հաշվարկման համար հիմք է հանդիսանում բացառապես եզրակացության մեջ կամ պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերում արտացոլված՝ ուշացած (աշխատանքային) օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված

ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված №4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի №1, №2, №3,№3.1 և № 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագրով նախատեսված ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ԳՇ Օպերատիվ գլխավոր վարչության ռազմատնտեսական պլանավորման վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ՊՆ ռազմաբժշկական ապահովման վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 2481001168180025
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01210095
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Բ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

Հավելված №1
№ԳՀԱՊՁԲ-26-9/7-4 ծածկագրով կնքված պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	CPV կոդը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) անվանումը	Անվանումը՝ ըստ համապատասխանության	Տեխնիկական բնութագիր	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը
1	33691162/25	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)	BTA FN plus անաէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման համար	BTA FN plus անաէրոբմիջավայրարյանստերիլությանորոշմանհամար: Նախատեսվածէ Bact/Alert սարքովարյանմեջանաէրոբմանրէներիհայտնաբերմանհամար	BTA FN	BioMerieux
3	33691162/45	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)	Դեպրոտեինայզեր 125 մլ	Դեպրոտեինայզեր 125մլ, գործարանային փաթեթավորումով տուփ Նախատեսված է Cobas b221 վերլուծիչի համար:	DEPROTENIZER 125ML	Roche Diagnostics
8	33691167/11	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	pH միկրոէլեկտրոդ	Նախատեսված է Cobas b221 վերլուծիչի աշխատանքը ապահովելու համար, գործարանային փաթեթավորմամբ:	MICRO ELECTRODE PH	Roche Diagnostics
9	33691167/12	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	pCO2 միկրոէլեկտրոդ	Նախատեսված է Cobas b221 վերլուծիչի աշխատանքը ապահովելու համար, գործարանային փաթեթավորմամբ:	Micro electrode PCO2	Roche Diagnostics
10	33691167/13	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	pO2 միկրոէլեկտրոդ	Նախատեսված է Cobas b221 վերլուծիչի աշխատանքը ապահովելու համար, գործարանային փաթեթավորմամբ:	MICRO ELECTRODE PO2	Roche Diagnostics
11	33691167/14	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Ռեֆերենս էլեկտրոդ	Նախատեսված է Cobas b221 վերլուծիչի աշխատանքը ապահովելու համար, գործարանային փաթեթավորմամբ:	MICRO ELECTRODE REF	Roche Diagnostics
12	33691167/15	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Na միկրո էլեկտրոդ	Նախատեսված է Cobas b221 վերլուծիչի աշխատանքը ապահովելու համար, գործարանային փաթեթավորմամբ:	Micro electrode NA +	Roche Diagnostics
13	33691167/16	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	K միկրո էլեկտրոդ	Նախատեսված է Cobas b221 վերլուծիչի աշխատանքը ապահովելու համար, գործարանային փաթեթավորմամբ:	Micro electrode K+	Roche Diagnostics
14	33691167/17	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Ca միկրոէլեկտրոդ	Նախատեսված է Cobas b221 վերլուծիչի աշխատանքը ապահովելու համար, գործարանային փաթեթավորմամբ:	MICRO ELECTRODE CA++	Roche Diagnostics
15	33691167/18	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Cl միկրոէլեկտրոդ	Նախատեսված է Cobas b221 վերլուծիչի աշխատանքը ապահովելու համար, գործարանային փաթեթավորմամբ:	Micro Electrode CL	Roche Diagnostics
16	33691420/36	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Պրոթրոմբինային ժամանակի որոշման թեստ-հավաքածու STA Compact Max	(STA NeoPTimal 10), պրոթրոմբինային ժամանակի որոշման թեստ հավաքածու: Լրակազմում 120 մլ՝ 12x10մլ ֆլակոններով: Մեթոդ՝ մակարդելիության ժամանակի որոշումը վիսկոզիմետրիկ չափման հիման վրա: ISI-ի արժեքը (0.9-1.1), զգայուն չէ մինչև 1 IU/ml ոչ ֆրակցիոն հեպարինի և մինչև 1.5 IU/ml anti-Xa ցածրմոլեկուլային կշիռ ունեցող հեպարինի նկատմամբ: Նախատեսված STA Compact Max վերլուծիչի համար:	STA NEOPTIMAL 10	Diagnostica Stago
17	33691420/37	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Ակտիվացած մասնակի թրոմբոպլաստինային ժամանակի որոշման թեստ-հավաքածու STA Compact Max	(STA PTT AUTOMATE 5) Մասնակի ակտիվացված թրոմբոպլաստինային ժամանակի որոշման թեստ հավաքածու: Լրակազմում 60 մլ՝ 12x5մլ ֆլակոններով: Մեթոդ՝ մակարդելիության ժամանակի որոշումը վիսկոզիմետրիկ չափման հիման վրա: Նախատեսված STA Compact Max վերլուծիչի համար:	STA PTT AUTOMATE 5	Diagnostica Stago
18	33691420/39	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Կոագ-կոնտրոլ	Թեստերի ստուգիչ (STA COAG CONTROL N + P)՝ նորմալ և պաթոլոգիական հեղուկներով՝ 12 մլ նորմալ և 12 մլ պաթոլոգիական հեղուկներով՝ 1 մլ-ոց ֆլակոններով: Նախատեսված է STA Compact Max վերլուծիչի համար:	STA COAG CONTROL N + P	Diagnostica Stago
19	33691420/40	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Մաքրող հեղուկ	Մաքրող հեղուկ (STA-Cleaner Solution): Ձևաչափ՝ 6x2500մլ: Նախատեսված է STA Compact Max վերլուծիչի համար:	STA CLEANER SOLUTION	Diagnostica Stago

20	33691420/41	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Լվացող հեղուկ	Լվացող հեղուկ (STA-Desorb U) Չևաչափ՝ 24x15մլ: Նախատեսված է STA Compact Max վերլուծիչի համար:	STA DESORB U	Diagnostica Stago
21	33691420/42	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Մաքսի ռեդյուսեր	Մաքսի ռեդյուսեր (STA-Maxi REDUCER): Լրակազմում 100 հատ: Նախատեսված է STA Compact Max վերլուծիչի համար:	STA MAXI REDUCER	Diagnostica Stago
22	33691420/43	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Միկրոքափս	Միկրոքափս (MICROCUPS STA): Լրակազմում 100 հատ: Նախատեսված է STA Compact Max վերլուծիչի համար:	STA MICROCUPS	Diagnostica Stago
23	33691420/44	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Ռեակցիոն կյուվետներ	Ռեակցիոն կյուվետներ (STA Cuvettes): Չևաչափ՝ 6x1000 կյուվետ: Նախատեսված է STA Compact Max վերլուծիչի համար:	STA CUVETTE	Diagnostica Stago
24	33691420/50	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	GP քարտ VITEK 2	Գրամ դրական մանրէների տարբերակման քարտ: Լրակազմում 20 հատ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է VITEK 2 վերլուծիչով հետազոտությունները ապահովելու համար:	GP	BioMerieux
25	33691420/51	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	NH քարտ VITEK 2	Նեյսերիա հեմոֆիլների տարբերակման քարտ: Լրակազմում 20 հատ, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է VITEK 2 վերլուծիչով հետազոտությունները ապահովելու համար:	NH	BioMerieux
26	33691420/52	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	YST քարտ VITEK 2	Սնկերի տարբերակման քարտ: Լրակազմում 20 հատ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է VITEK 2 վերլուծիչով հետազոտությունները ապահովելու համար:	YST	BioMerieux
27	33691420/53	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	AST-YS քարտ VITEK 2	Հակասնկային զգայնության քարտ: Լրակազմում 20 հատ, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է VITEK 2 վերլուծիչով հետազոտությունները ապահովելու համար:	AST-YS	BioMerieux
28	33691420/54	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	ANC քարտ VITEK 2	Անաէրոբ մանրէների տարբերակման քարտ: Լրակազմում՝ 20 քարտ, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է VITEK 2 վերլուծիչով հետազոտությունները ապահովելու համար:	ANC	BioMerieux
29	33691420/55	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	GN քարտ VITEK 2	Գրամ բացասական մանրէների տարբերակման քարտ: Լրակազմում 20 հատ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է VITEK 2 վերլուծիչով հետազոտությունները ապահովելու համար:	GN	BioMerieux
30	33691420/56	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	AST քարտ GN համար VITEK 2	Գրամ բացասական մանրէների հակաբիոտիկազգայնության քարտ: Լրակազմում 20 հատ, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է VITEK 2 վերլուծիչով հետազոտությունները ապահովելու համար:	AST-N	BioMerieux
31	33691420/57	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	AST քարտ GP համար VITEK 2	Գրամ դրական մանրէների հակաբիոտիկազգայնության քարտ: Լրակազմում 20 հատ, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է VITEK 2 վերլուծիչով հետազոտությունները ապահովելու համար:	AST-P	BioMerieux
37	33691420/87	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	GENbox անաէրոբ գազային գեներատոր	Անաէրոբ գեներատոր, լրակազմում 10 հատ, գործարանային փաթեթավորմամբ:	GENbox anaer	BioMerieux
39	33691420/90	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	GENbox միկրոաէրոֆիլ գազային գեներատոր	Միկրոաէրոֆիլգեներատոր, լրակազմում 10 հատ, գործարանայինփաթեթավորմամբ:	GENbox microaer	BioMerieux
40	33691420/91	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)	BTA փոխացանքս	BTA փոխացանքս: Լրակազմում 100 հատ, գործարանայինփաթեթավորմամբ:	STERILE AIRWAY NEEDLES	BioMerieux

		բազմակոմպոնենտ				
41	33691420/93	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Մեզի քրոմոգեն միջավայր	Մեզիմանրէաբանականհետազոտմանքրոմոգենմիջավայր chromID CPS Eliteլրակազմում 20 պետրիիթասիկ, գործարանայինփաթեթավորմամբ:	ChromID CPS	BioMerieux
42	33691420/230	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ	Անաէրոբգեներատորիինդիկատորներ: Լրակազմում 50 երիզ, գործարանայինփաթեթավորմամբ:	Anaerobic indicator	BioMerieux
46	33691420/264	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Cobas b221 անալիզատորի ազդայութեր և պարագաներ	Նախատեսված է Cobas b221 անալիզատորի համար Լրակազմը ներառում է հետևյալը. 1) S1 RINSE SOLUTION՝ 3 տուփ, տուփում 2 հատ 1850 մլ լվացող հեղուկ: 2) S2 FLUID PACK՝ 8 տուփ, տուփում 1 հատ 2055 մլ ազդանյութ: 3) COMBITROL Plus B, Level 1՝ 1 տուփ, ստուգման հեղուկ 1-ին մակարդակի, տուփում 30 սրվակ: 4) COMBITROL Plus B, Level 2՝ 1 տուփ, ստուգման հեղուկ 2-րդ մակարդակի, տուփում 30 սրվակ: 5) COMBITROL Plus B, Level 3՝ 1 տուփ, ստուգման հեղուկ 3-րդ մակարդակի, տուփում 30 սրվակ: 6) Տպիչի թուղթ OMNI՝ 2 տուփ, տուփում՝ 10 հատ:	Reagents for Cobas b221	Roche Diagnostics

1. Ապրանքատեսակը պետք է ունենա.

1.1 Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO 13485 և/կամ GMP և/կամ այլ):

1.2 Պիտանիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ դրանք հանձնման պահին պետք է ունենան ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն 1/2-ը:

2. Պայմանագրի կատարման փուլում մատակարարը ապրանքի մատակարարված խմբաքանակի հետ պետք է ներկայացնի.

2.1 1-ից-48-րդ չափաբաժինների համար՝ արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:

2.2 «1.1» կետում նշված փաստաթղթերի պատճենները: Դրանց ներկայացնելը պարտադիր չէ CE (Conformité Européenne) կամ FDA (Food and Drug Administration) կամ EAC (Eurasian Conformity) կամ EACMed (Eurasian Conformity medical) մակնշում ունեցող ապրանքների համար:

2.3 «1.2» կետի համաձայն՝ մատակարարման պահին ընդհանուր պիտանիության մնացորդային ժամկետի 1/2-ը չբավարարելու դեպքում՝ ՌԲԱՎ ստորաբաժանման(ների) կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա մատակարարը պարտավոր է պիտանիության ժամկետի ավարտից առնվազն 1 (մեկ) ամիս առաջ, չսպառված ապրանքատեսակները մեկ անգամ փոխարինել «1.2» կետի համապատասխան պիտանիության ժամկետ ունեցող խմբաքանակով:

3. Մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների համար պետք է ներկայացվի տեղեկատվություն արտադրողի և ֆիրմային անվանման վերաբերյալ, իսկ մոդելի և ապրանքային նշանի վերաբերյալ տեղեկության ներկայացումը պարտադիր չէ:

4. Յուրաքանչյուր անվանատող հանդիսանում է առանձին չափաբաժին:

5. Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Երևան, Մուրացան 115՝ Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ Տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Անվանումը՝ ըստ համապատասխանության	Չափման միավորը	Քանակ	Միավորի գին (դրամ)	Ընդհանուր գումար (ՀՀ դրամ)	Մատակարարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին		
								2-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան մայիսի 27-ը	3-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան օգոստոսի 31-ը	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան հոկտեմբերի 15-ը
1	33691162/25	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)	BTA FN plus անաէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման համար	հատ	50	5,700.00	285,000.00	25		25
3	33691162/45	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)	Դեպրոտեինայզեր 125 մլ	հատ	2	14,000.00	28,000.00			2
8	33691167/11	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	pH միկրոէլեկտրոդ	հատ	2	119,000.00	238,000.00	1		1
9	33691167/12	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	pCO2 միկրոէլեկտրոդ	հատ	2	293,000.00	586,000.00	1		1
10	33691167/13	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	pO2 միկրոէլեկտրոդ	հատ	2	234,000.00	468,000.00	1		1
11	33691167/14	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Ռեֆերենս էլեկտրոդ	հատ	2	148,920.00	297,840.00	1		1
12	33691167/15	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Na միկրո էլեկտրոդ	հատ	4	124,000.00	496,000.00	2		2
13	33691167/16	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	K միկրո էլեկտրոդ	հատ	4	108,000.00	432,000.00	2		2
14	33691167/17	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Ca միկրոէլեկտրոդ	հատ	4	111,000.00	444,000.00	2		2
15	33691167/18	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Cl միկրոէլեկտրոդ	հատ	4	104,000.00	416,000.00	2		2
16	33691420/36	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Պրոթրոմբինային ժամանակի որոշման թեստ-հավաքածու STA Compact Max	լրակազմ	26	64,800.00	1,684,800.00	15	5	6
17	33691420/37	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Ակտիվացած մասնակի թրոմբոպլաստինային ժամանակի որոշման թեստ-հավաքածու STA Compact Max	լրակազմ	26	102,600.00	2,667,600.00	15	5	6
18	33691420/39	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Կոագ-կոնտրոլ	լրակազմ	8	102,600.00	820,800.00	6	1	1
19	33691420/40	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Մաքրող հեղուկ	լրակազմ	18	75,600.00	1,360,800.00	10	4	4
20	33691420/41	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Լվացող հեղուկ	լրակազմ	18	59,400.00	1,069,200.00	10	4	4
21	33691420/42	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Մաքսի ռեդյուսեր	լրակազմ	8	91,800.00	734,400.00	8		
22	33691420/43	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Միկրոքափս	լրակազմ	2	100,000.00	200,000.00	2		
23	33691420/44	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Ռեակցիոն կյուվետներ	լրակազմ	8	810,000.00	6,480,000.00	8		
24	33691420/50	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	GP քարտ VITEK 2	լրակազմ	7	129,600.00	907,200.00	4	1	2
25	33691420/51	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	NH քարտ VITEK 2	լրակազմ	1	139,000.00	139,000.00	1		
26	33691420/52	լաբորատոր ազդանյութեր	YST քարտ	լրակազմ	3	139,000.00	417,000.00	2		1

		(ռեագենտներ) բազմակոմպոնենտ	VITEK 2							
27	33691420/53	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	AST-YS քարտ VITEK 2	լրակազմ	4	171,600.00	686,400.00	3		1
28	33691420/54	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	ANC քարտ VITEK 2	լրակազմ	1	180,000.00	180,000.00	1		
29	33691420/55	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	GN քարտ VITEK 2	լրակազմ	7	129,600.00	907,200.00	4	1	2
30	33691420/56	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	AST քարտ GN համար VITEK 2	լրակազմ	10	129,600.00	1,296,000.00	6	1	3
31	33691420/57	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	AST քարտ GP համար VITEK 2	լրակազմ	2	129,600.00	259,200.00	2		
37	33691420/87	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	GENbox անաէրոբ գազային գեներատոր	լրակազմ	4	29,160.00	116,640.00	2	1	1
39	33691420/90	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	GENbox միկրոաէրոֆիլ գազային գեներատոր	լրակազմ	6	31,800.00	190,800.00	4	1	1
40	33691420/91	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	BTA փոխացանքս	լրակազմ	2	130,000.00	260,000.00	2		
41	33691420/93	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Մեզի քրոմոգեն միջավայր	լրակազմ	60	46,320.00	2,779,200.00	20	20	20
42	33691420/230	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ	լրակազմ	1	37,200.00	37,200.00	1		
46	33691420/264	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Cobas b221 անալիզատորի ազդայութեր և պարագաներ	լրակազմ	2	1,900,300.00	3,800,600.00	1		1
Ընդամենը							**30,684,880.00**			

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ Տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված №2
ԳՀԱՊՁԲ-26-9/7-4 ծածկագրով կնքված պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի						
				դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում		
չ/հ	CPV կոդը	CPV անվանումը	անվանումը	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 25.12.2026թ.,
1	33691162/25	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)	BTA FN plus անաէրոբ միջավայր արյան ստերիլության որոշման համար	142,500.00	142,500.00	285,000.00
3	33691162/45	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)	Դեպրոտեինայզեր 125 մլ	0.00	0.00	28,000.00
8	33691167/11	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	pH միկրոէլեկտրոդ	119,000.00	119,000.00	238,000.00
9	33691167/12	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	pCO2 միկրոէլեկտրոդ	293,000.00	293,000.00	586,000.00
10	33691167/13	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	pO2 միկրոէլեկտրոդ	234,000.00	234,000.00	468,000.00
11	33691167/14	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Ռեֆերենս էլեկտրոդ	148,920.00	148,920.00	297,840.00
12	33691167/15	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Na միկրո էլեկտրոդ	248,000.00	248,000.00	496,000.00
13	33691167/16	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	K միկրո էլեկտրոդ	216,000.00	216,000.00	432,000.00
14	33691167/17	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Ca միկրոէլեկտրոդ	222,000.00	222,000.00	444,000.00
15	33691167/18	լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր	Cl միկրոէլեկտրոդ	208,000.00	208,000.00	416,000.00
16	33691420/36	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Պրոթրոմբինային ժամանակի որոշման թեստ-հավաքածու STA Compact Max	972,000.00	1,296,000.00	1,684,800.00
17	33691420/37	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Ակտիվացած մասնակի թրոմբոպլաստինային ժամանակի որոշման թեստ-հավաքածու STA Compact Max	1,539,000.00	2,052,000.00	2,667,600.00
18	33691420/39	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Կոագ-կոնտրոլ	615,600.00	718,200.00	820,800.00
19	33691420/40	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Մաքրող հեղուկ	756,000.00	1,058,400.00	1,360,800.00
20	33691420/41	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Լվացող հեղուկ	594,000.00	831,600.00	1,069,200.00
21	33691420/42	լաբորատոր ազդանյութեր	Մաքսի ռեդյուսեր	734,400.00	734,400.00	734,400.00

		(ռեագենտներ) բազմակոմպոնենտ				
22	33691420/43	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Միկրոքափս	200,000.00	200,000.00	200,000.00
23	33691420/44	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Ռեակցիոն կյուվետներ	6,480,000.00	6,480,000.00	6,480,000.00
24	33691420/50	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	GP քարտ VITEK 2	518,400.00	648,000.00	907,200.00
25	33691420/51	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	NH քարտ VITEK 2	139,000.00	139,000.00	139,000.00
26	33691420/52	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	YST քարտ VITEK 2	278,000.00	278,000.00	417,000.00
27	33691420/53	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	AST-YS քարտ VITEK 2	514,800.00	514,800.00	686,400.00
28	33691420/54	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	ANC քարտ VITEK 2	180,000.00	180,000.00	180,000.00
29	33691420/55	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	GN քարտ VITEK 2	518,400.00	648,000.00	907,200.00
30	33691420/56	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	AST քարտ GN համար VITEK 2	777,600.00	907,200.00	1,296,000.00
31	33691420/57	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	AST քարտ GP համար VITEK 2	259,200.00	259,200.00	259,200.00
37	33691420/87	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	GENbox անաէրոբ գազային գեներատոր	58,320.00	87,480.00	116,640.00
39	33691420/90	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	GENbox միկրոաէրոֆիլ գազային գեներատոր	127,200.00	159,000.00	190,800.00
40	33691420/91	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	BTA փոխացանքս	260,000.00	260,000.00	260,000.00
41	33691420/93	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Մեզի քրոմոգեն միջավայր	926,400.00	1,386,600.00	2,779,200.00
42	33691420/230	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ	37,200.00	37,200.00	37,200.00
46	33691420/264	լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	Cobas b221 անալիզատորի ազդայութեր և պարագաներ	1,900,300.00	1,900,300.00	3,800,600.00
Ընդամենը						**30,684,880.00**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ Տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված №3
ԳՀԱՊՁԲ-26-9/7-4 ծածկագրով կնքված պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված №___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
ԳՀԱՊՁԲ-26-9/7-4 ծածկագրով կնքված պայմանագրի

ԱԿՏ №_____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված №_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված №4
ԳՀԱՊՁԲ-26-9/7-4 ծածկագրով կնքված պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
գնորդի անվանումը վաճառողի անվանումը

«--------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.